

ԵՐԵՇ. ՄԽԻԹԱՐ ԱՐԲԱՆՈՐ ՊՂԻՆՁԷ ՆՈՐԱԿԵՐՏ ԱՐՁԱՆԻՆ ՆԱԽԱԿԱՏԻՔԸ

12 ՕԳՈՍՏՈՍ 1962

Օրինակ՝, եկեա՛լ յանուն Տեառն

Վերջալոյսի ծիրանի ցոլերուն հետ Ս. Ղազար կը մտնէ Ծիրանեփառ Հայրապետը, ամէնու սիրելի Հոգեւոր Տէրը՝ Գրիգոր-Պետրոս ԺԵ. Աղաճանեան Կաթողիկոս Պատրիարքը:

Գոյնզոյն վարդերու բոյրը հոգեզմայլ եւ երփներանգ ծաղիկներու հոյլը չքնաղ երկնային շուրջառ կազմած՝ Մխիթարեան Հայրերուն հետ, Ս. Ղազարու քաղաքին, կ'ողջունեն Գերերջանիկ Վսեմափայլ Հիւրը:

«Հրաշափառ» շարականի հայազրոյժ գանգիւնը կը պատէ Ս. Ղազարու կամարները. նուազարան, սիրտ ու բարձրախօս զանաճայն երկինք կը բարձրացնեն Լուսաւորչի փառքերը պատմող երգը նուիրական:

Աստուածամօր մեծ տօնին նախատօնակն է. նախատօնակ նաեւ Աստուածամօր մեծ երգիչին՝ Երնշ. Մխիթար Աբրահամ. Օգոստոս 11:

Արժանի՝ եմ...

Մենաստանի գանգերուն զուարթ զօղանքները վանք հաւաքած են բազմաշաւիւր աղգայիններ, որոնք Խաղիոյ զանազան կողմերէն փութացած են սարսուռով աւանատես ըլլալու մեծ հանգէսին:

Վերափոխման պատարագն ու խաղողօրհնէքը կը կատարուի հայ ծէսին ու երգին ամէնէն հարազատ արտայայտու-

թեամբը. պատարագիչն է Ծիրանեփառ Հայրապետը, որուն քաղցր ձայնը կը թափանցէ կարծէք հրեշտակային յարկերէն ներս:

Հայրապետին առջեւ ծնրադիր երկու նոր նուիրեալներ կը բարձրանան քահանայական աստիճանին: Աստուածային եւ երկնաւոր շնորհ կը հայցեն Հայրապետն ու քահանաներու զասերը:

«Արժանի եմ» կը պատասխանեն զպիրներն ու ժողովուրդը:

Մայրեր կ'արտասուեն, խունկը կը բարձրանայ, երգը կը գալարուի կամարէ կամար... երկու նորընծայ օծեալներ, Մխիթարի չիրմին վրայէն կ'օրհնեն ժողովուրդը:

Հ. Յարութիւն Պատրիկեան եւ Հ. Գէորգ Պալեան Մխիթարեան հոգեւոր բանակին նոր ոյժերը ահա բաղկատարած կը կանգնին խորանին առջեւ. խորան զոհաբերումի՝ ի սպաս Ս. Եկեղեցւոյ եւ Հայ ազգին:

Աստուածամօր փառքին նուիրուած երկու նուիրեալներուն տօնն է այսօր:

Մեծ հաւաքոյթը

Մխիթարեան Հայրերու բազմամեայ փափաքը ահա կ'իրականանայ այսօր. վանքի պարտէզին մէջ, նորակերտ հրապարակին վրայ, կանաչազեղ պուրակին մէջ կանգուն է Մեծն Մխիթարի արձանը, սպիտակ վարագոյրով ծածկուած:



Համայնապատկեր Մխիթար Աբրահամ պրինսէ մորակերտ արձանի բացման հանգիսին:

Կէսօրէն վերջն ենք. արեւը կը խոնարհի դէպի վերջալոյս. պարտէզը լեցուն է հրաւիրեալներով, հայեր՝ Խաղիայէն, Ֆրանսայէն, նոյնիսկ Արեւելէն, բազմաթիւ իտալացի բարեկամներ. մասնաւոր տեղ գրաւած է Վենետիկի քաղաքապետական շէփորախումբը, որուն բացառիկ արտօնութիւնն է շնորհուած նուազել Ս. Ղազարու մէջ:

Եւ ահա, որոշեալ ժամուն, վանքի մայր դռնէն դուրս կ'ելլէ շքախումբը, յաղթական փառերով տօնական հանդիսաւորութեամբ: Խաղիական ու Քահանայապետական քայլերդներու ընկերակցութեամբ, բարձրադիր բեմին վրայ, գուռազեղ զրաւանդներու հովանիին տակ նազեղ կը դրաւեն Ն. Վ. Տ. Ծիր. Աղաճանեան, Վենետիկի Ամենապատիւ Պատրիարքը՝ Ծիր. Յ. Ուրպանի, Վենետիկի քաղաքապետը՝ Տիար Ֆաւարեթոյ Ֆիւքա, Վենետիկի Կուսակալը՝ Տիար Ման-

ֆրետի Տէ Պերնարթ, Երեսփոխան Կաթողիկոս, Լոնկանեզի եւ Մոտիքա Ծովաւանները, Զօրավար Թագի, Կոմս Վիթթորիոյ Զինի, Ֆրանսական փոխ-հիւպատոսը, Վենետիկի գաւառական ելեւմուտքի ժողովին նախագահը, Միաբանութեան Ընդհ. Աբրահայրը՝ Գերպ. Սրապիոն Արքեպիսկ. Ուլուհոճեան, Ֆրանսայի Կաթողիկէ Հայոց Առաջնորդը՝ Գերպ. Կարապետ Եպիսկ. Ամատունի (Մխիթարեան), Գերպ. Ճուղեփիէ Սքարփա՝ Սարկաւազապետ Վենետիկի Ս. Մարկոսի, Գերպ. Յակոբ Ծ. Թ. Վ. Կիրակոսեան՝ Պատրիարքական Գործակալ Հոռմի Ս. Գահուն առջեւ՝ որ կը բերէր Քհնյալ. Լեւոնեան Վրթ.ի մաղթանքները, Մեծարդոյ Հ. Վահան Վրդ. Ինդիլգեան՝ ներկայացուցիչ Վիննայի Մխիթարեան Միաբանութեան Աբրահամ եւ Մեծաւոր Վիննայի Մխիթարեանց վանքին:

Ներկայ են Վենետիկի կրօնական Հաս-

տատուի թեանց Մեծաւորները, այլ պաշտօնական անձնավորութիւններ, S. Martino di Lupariի եկեղեցական Առաջնորդը:

Հեռագրով իրենց մասնակցութիւնը կը հաղորդեն Իտալիոյ Հայոց վարչութեան, Մշակութային Միութեան, «Հայ Տուն»ի, Սեւրի Մուրատեան վարժարանի աշակերտներու ծնողաց Միութեան նախագահները:

Ներկայ է Մուրատ - Ռափայէլեանի նախկին սաներու նորակազմ միութեան վարչութիւնը իր լրիւ կազմով, բազմաթիւ նախկին սաներ:

Ներկայ է նաեւ նկարիչ Գրիգոր Շիրթեան, որ այս օրերու կ'աւարտէ «Յիսուսի մկրտութիւնը» ներկայացնող վերջին հսկայ նկարը, Ֆիրենցէի Autostrada del Soleի վրայ նայող նորակառոյց եկեղեցւոյ մկրտարանին համար:

Մամուլի թղթակիցներ եւս, «Յաւաջ»ի, «Այդ»ի, «Արեւելք»ի, «Մարմարա»ի, «Ժամանակ»ի, «Մասիս»ի կողմէ կը բերեն իրենց սրտաջերմ խնդակցութիւնները:

Հրաւիրեալները տեղաւորուած էին արդէն՝ երբ չեփորախումբը կը հնչեցնէր A. Ponzilacquaի «Ձարթիր աշխարհ»ը, պերճ ու հանդիսաւոր:

Գերպոյ. Ամատունիի ուղերձը

Լուսթիւնը տպաւորիչ է. ոգեւորութեան սարսուռ մը կը համակէ զամէնքը:

Կը խօսի Գերպոյ. Ամատունի ու կը պարզէ Մխիթար Աբբազօր արձանին խորհուրդը, մեկնելով այն հսկայ ու նախախնամական զերը որ ունեցած է ասպընջական վենետիկը մեծն Մխիթարի գործին մէջ, որով հայ ժողովուրդը՝ Մխիթարի արձանին մէջ կու գայ պանծացնել, երախտագիտական զգացումներով, Արեւմուտքի զերը՝ Արեւելքի նուիրուած այս գործին մէջ: Այս արձանը, կեղծակցիչ Գերպոյ. ճառախօսը, խորհրդանշանիչ է Հայ եւ Իտալացի ժողովուրդներուն հոգեւոր հաղորդակցութեան, յաւերժացողիչ այս բարեացա-

կամ փոխադարձ սիրոյն, տիեզերական եկեղեցւոյ մայրենի ծոցին մէջ:

Փառք Անմահին

Ծիրանեփառ Հայրապետը, ահա կը մօտենայ արձանին, շուրջառ առած կու գայ տալու ծիսական օրհնութիւնը:

Արծաթեայ իր ձայնի հնչիւններուն հետ, յանկարծ կ'իյնայ սպիտակ քօղը, եւ ահա կանգուն է Մխիթար ամէնուն զիմաց, բազուկները կարկառած դէպի հիւրերը... Ծափերը կը դղրդան եւ հասարակաց ուրախութեան մէջ չեփորախումբը կը հնչեցնէ L. Perosiի Քրիստոսի յարութիւնը ներկայացնող «Oratorio»ին վերջին յաղթական ձայնարկուող երգերը:

Հանդիսականները հաղիւ տեղաւորուած չեփորախումբը կը հնչեցնէ Սինանեանի «Marche Mechitar»ը, որ իր արեւելեան երեւելներով եւ արեւմտեան դաշնաւորումով կու գայ երաժշտականօրէն բացատրել Մխիթարի խորհուրդը: Փառք անմահին:

Սրբգ. Պապին նամակը եւ նուերները

Ապա կը կարդացուի Ն. Ս. Սրբգ. Քա-հանայապետին շնորհաբողիս նամակը, որ համակ հիացում է Մեծն Մխիթարի անձին ու գործին հանդէպ եւ գրաւական երկնային օրհնութեանց:

Սրբգ. Քահանայապետը, այս առթիւ, Մխիթարեան թանգարանին ուղարկած է արոյրէ հնդկական սափոր մը, զեղազարդ քանդակներով, ինչպէս նաեւ իր Քահանայապետութեան մեծ մետալիոնները եւ գունատիպ իր մէկ նկարը, հանդերձ ստորագրութեամբ:

Բացառիկ այս նուէրները ցոյց կու տան թէ ինչքան սէր ու գուրգուրանք կը տածէ Ն. Սրբութիւնը Մխիթար Աբբազօր Տան հանդէպ, սէր ու գուրգուրանք՝ զոր յաճախ առիթն ունեցած ենք վայելելու, իր բազմաթիւ այցելութեանց առթիւ, երբ վենետիկի Պատրիարք էր:

Ճառեր, ուղերձներ

Հետզհետէ խօսք կ'առնեն Ն.Վ.Տ. Ծիր. Աղաճանեան, վենետիկի Կուսակալը, Քաղաքապետը, հուսկ վենետիկի Ամենապատիւ Ծիր. Պատրիարքը:

Հանդիսաւոր պահու մը Հոգեւոր Տէրը՝ Ծիր. Աղաճանեան Սրբգ. Քահանայապետին կողմէ զեղեցիկ մետալ մը կը յանձնէ արձանագործ վարպետին՝ Փրոֆ. Անթոնիոյ Պաճճոյի, ընդհանուր խանդավառութեան մէջ:

Վերջալոյսի ցալքեր

Արեւը հետզհետէ կ'իջնէ... ճառախօսները յուզիչ արտայայտութիւններով կ'ողբեցնեն յիշատակը Մեծն Մխիթարի, որուն արձանը ոսկի շողեր հագած է հիմա:

Յուզիչ այդ պահուն, իտալերէն լեզուով խօսուած երկար ճառերէ վերջ (որոնք ամբողջապէս հանդերձ թարգմանութեամբ պիտի ներկայացնենք քիչ յետոյ), յանկարծ ոգեւորիչ ու զիւթական հոսանք մը կ'անցնի սրտէ սիրտ. չեփորախումբը կը հնչեցնէ Արամ Խաչատուրեանի «Թուրերու պարը» աշխարհահռչակ:

Հանդիսականներու թափօրը հիմա կ'երկարի դէպի արձան, հիացումով ու արցունքով կատարելու ուխտ մը նուիրական, մինչ չեփորախումբը Ռոսսինիէն յաղթական ու զուարթ հնչիւններով կ'ողջունէ ամէնքը:

Ընտանեկան պատուասիրութենէ մը վերջ, հրաժեշտ կ'առնեն հիւրերը:

Վենետիկի Ամենապատիւ Պատրիարքը կը մնայ տակաւին վաճառ, մասնակցելու երեկոյեան եղբայրական ընթերիքին:

Մութ եւ լոյս

Հիւրերը մեկնեցան, նուազները լռեցին, ստուերներն իջան ու վենետիկի լճակը պճնուեցաւ գունազեղ իր լոյսերով, աստղազարդ երկնքի նման:

Հայոց կղզին ալ այդ իրիկուն կը շող-



Հ. Ներսէս Տէր Ներսէսեան կը կարդայ Սրբգ. Քահանայապետին շնորհաբողիս նամակը:

շողար մութին մէջէն: Սլացիկ զանգաւատունը բոցի նման հրաշէկ, պարտէզին ծառերուն մէջէն կանաչ ցոլացիկներ, նորակերտ արձանը մանաւանդ լոյսերու կամարի մը մէջէն, երազային տեսք մը տուած էին այդ գիշեր Ս. Ղազարին:

Ամէն գիշեր, մինչ քաղաքն ու հաճոյքի պալատները լոյսերու մէջ կը ծփփան, Ս. Ղազար կը ննջէ խաղաղ: Բայց այս գիշեր տարօրինակ է ամէն բան. քաղաքն ամբողջ մութ է կարծես եւ Ս. Ղազարն է լոյսեր զգեցած, կարծես խորհրդանշելու թէ Լուսանորդին հոգին անշէջ կը մնայ իր մութ տապանին մէջ ալ, ու սեւեր հագած հայ միանձնները լոյսի պաշտօնեաներն են, քրմապետներ հայ մշակոյթին: